ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/57

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.10.2017թ. թիվ 03/26-3/18705-17 գրությամբ «Մակսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.10.2017թ. թիվ ԴՎԱ/3572 գրության հիման վրա, 16.10.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է 10.10.2017թ. թիվ ԴՎԱ/3572 ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 10.10.2017թ. թիվ ԴՎԱ/3572 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 06.05.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/6-1 ծածկագրով պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. սեպտեմբերի 26-ից միակողմանի մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ 500 հատ ձայներիզների (DVD սկավառակ) մասով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 06.10.2017թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Գագիկ Ուստյանը:

3. <u>«Մաքսիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մակսիմ» ՍՊԸ-ն 27.10.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով մասնավորապես հայտնել է.

«Վերոհիշյալ ընթացակարգի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ա) ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ պատվիրատու) և «Մակսիմ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) միջև 06.05.2017թ. կնքվել է պետության

կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման «ՇՀԱՊՁԲ-3/6-1» ծածկագրով պայմանագիր:

Վերոհիշյալ պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ:

Ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի՝ ձայներիզները (ԴՎԴ սկավառակները) պետք է մատակարարվեն 2-րդ և 3-րդ եռամսյակում՝ համապատասխանաբար՝ 500 և 500 թվաքանակով:

Ի թիվս այլ ապրանքների՝ «Մակսիմ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել ձայներիզներ (ԴՎԴ սկավառակներ), և տեխնիկական բնութագրի համաձայն՝ սկավառակը պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գեղարվեստական, փաստավավերագրական և ուսումնադաստիարակչական ֆիլմերի, երգերի ձայնագրությամբ (հայերեն, ռուսերեն, անգլերեն)՝ պատասխանատու ստորաբաժանման հայտերի համաձայն:

«Մակսիմ» ՍՊԸ-ն պատվիրատուին ուղղված 14.07.2017թ. գրությամբ հայտնել է հետևյալը. «ՀՀ ՊՆ և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 06.05.2017թ.-ին կնքվել է պետության կարիքների համար մատակարարման պետական գնման թիվ ՇՀԱՊՁԲ-3/6-1 պայմանագիրը, որի համաձայն մեր ընկերությունը 2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում պարտավոր էր մատակարարել «Ձայներիզներ (ԴՎԴ սկավառակ)» ապրանքատեսակը, թվով 500 հատ: Հիշյալ պայմանագրով, «Ձայներիզներ (ԴՎԴ սկավառակ)» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում նշված է, որ «Սկավառակը պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գեղարվեստական, փաստավավերագրական և ուսումնադաստիրակչական ֆիլմերի, երգերի ձայնագրությամբ (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատասխանատու ստորաբաժանման հայտերի համաձայն», սակայն մինչ օրս Ձեր կողմից մեզ նյութեր չեն տրամադրվել (3-րդ անձանց իրավունքներից ազատ նյութեր), ինչի արդյունքում մեր ընկերությունը զրկվել է հիշյալ ապրանքները մատակարարելու հնարավորությունից և անարդարացիորեն ստիպված է լինելու վճարել ուշացված օրերի համար պայմանագրով նախատեսված տույժերը»:

Ի պատասխան «Մակսիմ» ՍՊԸ-ի վերոհիշյալ գրության՝ պատվիրատուն 29.07.2017թ. թիվ 382 գրությամբ հայտնել է հետևյալը. «Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության և Ձեր միջև կնքված ՇՀԱՊՁԲ-3/6-1 պայմանագրով «Ձայներիզներ» (DVD սկավառակ) ապրանքատեսակի մատակարարումը կազմակերպելու վերաբերյալ գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՈՒ ԱՀՏԱ վարչության մշակութաժամանցային բաժնի կողմից աշխատանքային կարգով, 06.05.2017թ. ժամը 18:51 Vladmaghaqyan@gmail.com էլեկտրոնային հասցեով Ձեր համապատասխան a.gasparyan.info@gmail.com էլեկտրոնային հասցեին է ուղղարկվել ձայնագրման նյութերը, իսկ ՇՀԱՊՁԲ-3/6-1 պայմանագրում նշված չէ «3-րդ անձանց իրավունքներից ազատ նյութեր» տրամադրելու պահանջի մասին: Համաձայն պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման ՇՀԱՊՁԲ-3/6-1 պայմանագրի 3-րդ բաժնի 3.1 կետի 3.1.1 ենթակետի՝ եթե մինչև 31.07.2017թ. «Ձայներիզներ» (DVD սկավառակ) ապրանքատեսակը չմատակարարվի, ապա կառաջանա պայմանագիրը լուծարելու խնդիրը: Կից կրկին անգամ ուղղարկվում է ձայնագրման համար անհրաժեշտ նյութերի անվանումը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1111-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝

1. Հեղինակային իրավունքը տարածվում է ստեղծագործական գործունեության արդյունք համարվող գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների վրա՝ անկախ ստեղծագործության նշանակությունից ու արժանիքներից, ինչպես նաև այն արտահայտելու եղանակից:

3. Գրավոր կամ այլ կերպ նյութական կրիչի (ձեռագրի, մեքենագրի, նոտագրի, տեխնիկական միջոցների օգնությամբ ամրակայված՝ ներառյալ ձայնագրությամբ կամ տեսագրությամբ արտահայտված, երկչափ կամ ծավալային-տարածքային ձևով պատկերի վրա ամրագրված և այլն) վրա արտահայտված ստեղծագործությունը համարվում է օբյեկտիվ ձև ունեցող՝ անկախ երրորդ անձանց համար այն մատչելի լինելուց:

Նույն օրենգքրի 1112-րդ հոդվածի համաձայն՝

Հեղինակային իրավունքի օբյեկտներ են՝

1) գրական (գրական-գեղարվեստական, գիտական, ուսումնական, հրապարակա-խոսական և այլ) ստեղծագործությունները.

2) դրամատիկական և սցենարային ստեղծագործությունները.

3) տեքստով և առանց տեքստի երաժշտական ստեղծագործությունները.

4) երաժշտական դրամատիկական ստեղծագործությունները.

5) պարարվեստի ստեղծագործությունները և մնջախաղերը.

6) տեսալսողական ստեղծագործությունները (կինոֆիլմերը, հեռուստաֆիլմերը և տեսաֆիլմերը, տեսասլայդային ֆիլմերը, դիաֆիլմերը և այլ կինո, հեռուստատեսային և տեսաստեղծագործությունները), ռադիոստեղծագործությունները...:

ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն հեղինակային և հարակից իրավունքները խախտելու համար:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, ինչպես նաև առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը շահույթ ստանալու նպատակով մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների վրա ամրագրելը, տարածելը և (կամ) վաճառելը՝ եթե այդ արարքը կատարվել է զգալի չափերով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Այսպիսով, ըստ վկայակոչված պայմանագրի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագրի՝ ԴՎԴ սկավառակները պետք է պարունակեն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գեղարվեստական, փաստավավերագրական և ուսումնադաստիարակչական ֆիլմերի, երգերի ձայնագրություններ, որոնք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1112-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանում են հեղինակային իրավունքի օբյեկտներ, ուստի և այդ օբյեկտների վրա տարածվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1111-րդ հոդվածով սահմանված հեղինակային իրավունքը կարգավորող դրույթները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով հեղինակային իրավունքի խախտման համար ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածը նախատեսված քրեական պատասխանատվության հնարավորությունը՝ «Մակսիմ» ՍՊԸ-ն պահանջել է պատվիրատուից ներկայացնել 3-րդ անձանց իրավունքներից ազատ գեղարվեստական,

փաստավավերագրական և ուսումնադաստիարակչական ֆիլմերի, երգերի ձայնագրություններ, քանզի ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը արգելում է առանց հեղինակային իրավունքի իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը շահույթ ստանալու նպատակով մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների վրա ամրագրելը և վաճառելը:

Սակայն պատվիրատուի կողմից օրենսդրությամբ ամրագրված վերոհիշյալ պահանջը այդպես էլ չի կատարվել, և «Մակսիմ» ՍՊԸ-ից պահանջվել է առանց հեղինակային իրավունքի իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը շահույթ ստանալու նպատակով լազերային էլեկտրոնային կրիչների վրա ամրագրելը և վաճառելը:

Ուստի նման պայմաններում «Մակսիմ» ՍՊԸ-ն իրավացիորեն չէր կարող կատարել անօրինական պահանջը և թույլ տալ ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով նախատեսված արարք:

բ) ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 06.05.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման «ՇՀԱՊՁԲ-3/6-1» ծածկագրով պայմանագրի 3.3.4 կետի համաձայն՝ վաճառողը իրավունք ունի լուծել պայմանագիրը, եթե գնորդը էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն պայմանագրի 3.3.4.1 կետի համաձայն՝ գնորդի կողմից պայմանագրի խախտելը էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

Ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի՝ տեսապրոյեկտորները պետք է մատակարարվեին 2-րդ եռամսյակում՝ համապատասխանաբար՝ 15 թվաքանակով:

Պայմանագրի 3.2.3 կետի համաձայն՝ գնորդը պարտավորվում է պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրով նախատեսված տույժերը, որը կազմում է 0,05 տոկոս յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է

հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով հավելված 3-ով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով վճարման ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

Ըստ պայմանագրի հավելված թիվ 3՝ վճարման ժամանակացույցի՝ տեսապրոյեկտորների համար նախատեսվում է ֆինանսավորել (վճարել) 2017թ. ըստ ամիսների՝ մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներում:

Ըստ 08.06.2017թ. «Մակսիմ» ՍՊԸ-ի և ՀՀ ՊՆ-ի միջև ստորագրած արձանագրության՝ պայմանգրով նախատեսված տեսապրոյեկտորները մատակարարվել են 2017թ. մայիսի 31-ին:

Չստանալով սահմանված վճարումը (ինչպես նաև կատարված այլ պայմանագրերով չստանալով համապատասխան վարձատրություն)՝ «Մակսիմ» ՍՊԸ-ն ստիպված բազմաթիվ անգամ գրավոր դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը, այնուհետև նաև ՀՀ վարչապետին և ՀՀ Նախագահին:

Այնուհետև, 28.08.2017թ. ՀՀ ՊՆ-ին ուղղված գրությամբ «Մակսիմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ պայմանագրի 3.3.4 կետի համաձայն՝ վաճառողը իրավունք ունի լուծել պայմանագիրը, եթե գնորդը էականորեն խախտել է պայմանագիրը: Ընկերությունը հայտնել է, որ պայմանագրի 3.3.4.1 կետի համաձայն՝ գնորդի կողմից պայմանագրի խախտելը էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները: Ելնելով այն հանգամանքից, որ ըստ 08.06.2017թ. «Մակսիմ» ՍՊԸ-ի և ՀՀ ՊՆ-ի միջև ստորագրած արձանագրության՝ պայմանգրով նախատեսված տեսապրոյեկտորները մատակարարվել են 2017թ. մայիսի 31-ին, սակայն վճարման ժամանակացույցի համաձայն՝ պատվիրատուի կողմից վճարումը չի կատարվել պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ոչ հունիս, ոչ հուլիս, ոչ էլ օգոստոս ամսին (ՀՀ ՊՆ-ն միայն 04.09.2017թ. կատարել է

համապատասխան վճարումը), ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնորդը էականորեն խախտել է պայմանագիրը, այն է բազմիցս խախտվել է ապրանքի համար վճարելու ժամկետները, «Մակսիմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ հիմք ընդունելով պայմանագրի 3.3.4 կետը (վաճառողը իրավունք ունի լուծել պայմանագիրը)՝ միակողմանի լուծում է նշված պայմանագիրը:

Սակայն պատվիրատուն, հաշվի չառնելով «Մակսիմ» ՍՊԸ-ի 28.08.2017թ. գրությունը՝ Ընկերության կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, 30.08.2017թ. թիվ ԴՎԱ/2871 գրությամբ հայտնել է, որ ինքն է միակողմանի մասնակի լուծում պայմանագիրը՝ չմատակարարած 500 հատ սկավառակների մասով:

«Գնումների մասին» 2016թ. ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի <<ա>> պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, «Մակսիմ» ՍՊԸ-ին չի տրամադրվել 3-րդ անձանց իրավունքներից ազատ գեղարվեստական, փաստավավերագրական և ուսումնադաստիարակչական ֆիլմերի, երգերի ձայնագրություններ, քանզի ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը արգելում է առանց հեղինակային իրավունքի իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը շահույթ ստանալու նպատակով մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների վրա ամրագրելը և վաճառելը: Այսինքն, նման փաստական հանգամանքների պայմաններում «Մակսիմ» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն զրկվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հնարավորությունից:

Բացի այդ, հաշվի չառնելով «Մակսիմ» ՍՊԸ-ի 28.08.2017թ. ՀՀ ՊՆ-ին ուղղված գրությունը՝ պայմանագրի 3.3.4 կետի ուժով «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ՝ ՀՀ ՊՆ-ն ինքն է միակողմանի մասնակի լուծել պայմանագիրը, ինչը նույնպես հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթների խախտում:

Հաշվի առնելով վերոշարադրած փաստերը՝ գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը, միակողմանի մասնակի լուծելով ՀՀ ՊՆ-ի և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 06.05.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման <<ՇՀԱՊՁԲ-3/6-1» ծածկագրով պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրում ենք հաշվի առնել նշված փաստարկները, «Մակսիմ» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված խախտումը և ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Արթուր Գասպարյանը, ինչպես նաև Խորհրդում Ընկերության շահերի ներկայացման կապակցությամբ ներգրավված՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի հիմնադիր Հասմիկ Ենգոյանը և նույն ընկերության տնօրեն Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/57 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 16.10.2017թ. թիվ 03/26-3/18705-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.10.2017թ. թիվ ԴՎԱ/3572 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 06.05.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-3/6-1 ծածկագրով գնման պայմանագիրը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին 03.10.2017թ. ուղղված զեկուցագիրը, Պատվիրատուի՝ «Մակսիմ» ՍՊԸ-ին ուղղված 30.08.2017թ. թիվ ԴՎԱ/2871 և 05.10.2017թ. թիվ ԴՎԱ/3486 գրությունները, Ընկերության 28.08.2017թ. ծանուցումը կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, «Մակսիմ» ՍՊԸ-ի 27.10.2017թ. Խորհրդին ներկայացված դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 06.05.2017թ. կնքվել է N ՇՀԱՊՁԲ-3/6-1 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Մակսիմ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակակարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):
- 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 3.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:
- 3.3.4 կետի համաձայն՝ Վաճառողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 3.3.4.1 կետի համաձայն՝ Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
- 4.2 կետի համաձայն՝ գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով հավելված 3-ով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում) բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով

նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը նույն կետիպայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

- 7.5 կետի համաձայն՝ Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա սակայն չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:

Պայամանգրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրի և Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում մատակարարել թվով 1000 հատ (500-ական յուրաքանչյուր եռամսյակում) ձայներիզներ, 2-րդ եռամսյակում մատակարարել թվով 15 հատ տեսապրոյեկտոր և 3-րդ եռամսյակում ՝ թվով 2 հատ տպիչ/ պատճենահանման մեքենաներ:

«Մակսիմ» ՍՊԸ-ն պատվիրատուին ուղղված 14.07.2017թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ-ի և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 06.05.2017թ.-ին պետության կարիքների համար կնքված պետական գնման ՇՀԱՊՁԲ-3/6-1 պայմանագրի համաձայն Ընկերությունը 2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում պարտավոր էր մատակարարել «Ձայներիզներ (ԴՎԴ սկավառակ)» ապրանքատեսակը, թվով 500 հատ: Ընկերությունը Պատվիրատուի ուշադրությունը հրավիրել է այն հանգամանքի վրա, որ հիշյալ պայմանագրի տեխնիկական բնութագրում նշված է, որ սկավառակները պետք է մատակարարվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գեղարվեստական, փաստավավերագրական և ուսումնադաստիրակչական ֆիլմերի, երգերի ձայնագրությամբ /հայերեն, ռուսերեն, անգլերեն/ պատասխանատու ստորաբաժանման հայտերի համաձայն, սակայն մինչ օրս Պատվիրատուի կողմից Ընկերությանը չեն տրամադրվել 3-րդ անձանց իրավունքներից ազատ նյութեր, ինչի արդյունքում վերջինս զրկվել է հիշյալ ապրանքները մատակարարելու հնարավորությունից և ստիպված է լինելու վճարել ուշացված օրերի համար պայմանագրով նախատեսված տույժերը:

Ի պատասխան «Մակսիմ» ՍՊԸ-ի վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն 29.07.2017թ. թիվ 382 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՋՈՒ ԱՀՏԱ վարչության կողմից 06.05.2017թ. Ընկերության համապատասխան էլեկտրոնային հասցեին են ուղարկվել

ձայնագրման նյութերը: Միաժամանակ, Պատվիրատուն ընգծել է, որ ՇՀԱՊՁԲ-3/6-1 պայմանագրում նշված չէ «3-րդ անձանց իրավունքներից ազատ նյութեր» տրամադրելու պահանջի մասին, և նախազգուշացրել, որ համաձայն պետության կարիքների համար պետական գնման ՇՀԱՊՁԲ-3/6-1 պայմանագրի 3-րդ բաժնի 3.1 կետի 3.1.1 ենթակետի՝ եթե մինչև 31.07.2017թ. «Ձայներիզներ» (DVD սկավառակ) ապրանքատեսակը չմատակարարվի, ապա կառաջանա պայմանագիրը միակողմանի լուծելու խնդիրը:

Պայմանագրի մեկ այլ չափաբաժնով նախատեսված տեսապրոյեկտորները Ընկերության կողմից մատակարարվել են 2017թ. մայիսի 31-ին, և նշված փաստը ֆիքսվել է «Մակսիմ» ՍՊԸ-ի և ՀՀ ՊՆ-ի միջև 08.06.2017թ. երկկողմանի ստորագրված N 6 հանձնման-ընդունման արձանագրությամբ:

ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված 19.07.2017թ. թիվ 17/036 գրությամբ «Մակսիմ» ՍՊԸ-ն մասնավորապես հայտնել է, որ պետական գնման ՇՀԱՊՁԲ-3/6-1 պայմանագրի շրջանակներում Ընկերությունը կատարել է գնման ժամանակացույցով 2-րդ եռամսյակում կատարման ենթակա մատակարարումները, ինչի վերաբերյալ 08.06.2017թ. ստորագրվել է N 6 արձանագրությունը: Ընկերությունը վկայակոչելով Պայմանագրի 4.2 կետը՝ նշել է, որ մատակարարված ապրանքի դիմաց դրամական միջոցների փոխանցումը պետք է իրականացվեր հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 15 բանկային օրվա ընթացքում, այսինքն, մինչև 29.06.2017թ., ինչը Պատվիրատուի կողմից չի կատարվել: Նույն գրությամբ Ընկերությունը նշել է Պատվիրատուի՝ Պայմանագրից բխող պարտավորությունները Ընկերության նկատմամբ և խնդրել նախարարի հանձնարարանը՝ նշված պարտավորությունները 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարելու համար:

Այնուհետև, «Մակսիմ» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ-ին ուղղված 28.08.2017թ. գրությամբ հայտնել է, որ, հաշվի առնելով, որ պայմանգրով նախատեսված տեսապրոյեկտորները իր կողմից մատակարարվել են 2017թ. մայիսի 31-ին, սակայն Պատվիրատուի կողմից վճարումը չի կատարվել պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ոչ հունիս, ոչ հուլիս, ոչ էլ օգոստոս ամսին, ուստի Ընկերությունը՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3.3.4.1 կետը, համաձայն որի գնորդի կողմից Պայմանագրի խախտելը էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պատվիրատուն 30.08.2017թ. թիվ ԴՎԱ/2871 գրությամբ պատասխանել է «Մակսիմ» ՍՊԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

«Ձեր իսկ 28.07.2017թ. գրությամբ ներկայացված առաջարկի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ հաշվի առնելով N ՇՀԱՊՁԲ-3/6-1 գնման պայմանագրի 3.1.7 կետը, սկսում է 500 հատ ձայներիզների մասով միակողմանի մասնակի լուծման գործընթացը՝ օրենքից բխող բոլոր հետևանքներով, իսկ 2 հատ տպիչ/պատճենահանման մեքենաներ ապրանքատեսակի մասով առաջարկում է երկկողմանի համաձայնությամբ պայմանագիրը լուծել, որի համար մինչև պայմանագրով նախատեսված մատակարարման վերջնաժամկետը անհրաժեշտ է Ձեր գրավոր համաձայնությունը»:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետը զեկուցագրով հայտնել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև կնքված ՇՀԱՊՁԲ-3/6-1 պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 30.06.2017թ. նախատեսված՝ 500 հատ ձայներիզների մատակարարումները 26.08.2017թ. դրությամբ չեն իրականացվել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. օգոստոսի 26-ին միակողմանի լուծել է 06.05.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/6-1 գնման պայմանագիրը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 13.10.2017թ. կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչն ընդունեց, որ Ընկերությունը 2-րդ եռամսյակի ընթացքում չի մատակարարել N ՇՀԱՊՁԲ-3/6-1 պայմանագրի N 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի թիվ 3 չափաբաժնով սահմանված 500 հատ ձայներիզները, թեև, պնդելով Ընկերության 27.10.2017թ. գրությամբ Խորհրդին ներկայացված դիրքորոշումը, հայտնեց, որ նշվածի պատճառը Ընկերությանը 3-րդ անձանց իրավունքներից ազատ նյութեր չտրամադրելն է, որպիսի պայմաններում Ընկերության կողմից հեղինակային իրավունքի խախտմամբ ձայնագրությունների իրականացումը կորակվեր որպես քրեորեն պատժելի արարք:

Ընկերության ներկայացուցիչները նշեցին նաև, որ Պատվիրատուն՝ հաշվի չառնելով «Մակսիմ» ՍՊԸ-ի 28.08.2017թ. ՀՀ ՊՆ-ին ուղղված գրությունը՝ որով «Մակսիմ» ՍՊԸ-ն՝ հիմք ընդունելով պայմանագրի 3.3.4 կետը, ծանուցել է պայմանագիրը միակողմանի լուծելու

վերաբերյալ՝ ինքն է միակողմանի մասնակի լուծել պայմանագիրը: Վերոնշյալ փաստը նույնպես գնահատվում է Ընկերության կողմից որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթների խախտում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ն մատակարարել է Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված «տեսապրոյեկտորներ» ապրանքատեսակը, որն ընդունվել է Պատվիրատուի կողմից, սակայն դրա դիմաց վճարումը սահմանված ժամկետում չի իրականացվել:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պայմանագրով նախատեսված «Ձայներիզներ» (DVD սկավառակ) ապրանքը սահմանված ժամկետում «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է միայն «տեսապրոյեկտորներ» ապրանքատեսակիի համար վճարման ժամկետը, մինչդեռ Պայմանագրի 3.3.4.1 կետի համաձայն՝ Ընկերությունը կարող էր միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Պատվիրատուի կողմից բազմիցս (երկու և ավելի անգամ) խախտվեին մատակարարված ապրանքի դիմաց վճարման ժամկետները: Հետևաբար, Ընկերության կողմից Պայմանագրի միակողմանի լուծումն իրավաչափ չէ:

Ինչ վերաբերում է մատակարարված ապրանքի դիմաց վճարման ժամկետների խախտումից բխող պարտավորությունների կատարմանը, ապա Խորհուրդը գտնում է, որ նշված պարագայում Ընկերությունն իրավունք ուներ Պատվիրատուից պահանջելու Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժի հաշվարկում:

Խորհուրդը գտնում է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ն, Պայմանագրով նախատեսված «Ձայներիզներ» (DVD սկավառակ) ապրանքը սահմանված ժամկետում չմատակարարելով՝ խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Մակսիմ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևէ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.10.2017թ. «Մակսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ